ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ-25/37

ք. Երևան

«29» 04 2025թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մայ Մարկետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սևակ Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել Հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անՀատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անՀատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել Հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև Հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին Հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 364910 (երեք հարյուր վաթսունչորս հազար ինը հարյուր տաս) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխՀատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական Հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10* Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

***1-5, 8-9, 11-13, 16-րդ 18-23-րդ չափաբաժինների համար:**

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2, ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011018562 ՀՎՀՀ 02698732	«Մայ Մարկետ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Կոմիտասի պ. 36,բն.14, «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570048536910100 ՀՎՀՀ 00184008
Գլխավոր քարտուղար՝	**Տնօրեն՝**
---------- **Հ. Հակոբյան** (ստորագրություն) Կ.Տ.	---------- **Ս. Եսայան** (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«29» 04 2025թ կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-25/37 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ապրանքի

Հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	քանակը	միավոր գինը, ՀՀ դրամ	ընդհանուր գինը, ՀՀ դրամ	Մատակարարման	
								Հասցեն	ժամկետը
1	30193200/2	փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	մետաղյա ցանցից թղթադարակ՝ 3 դարակ, նախատեսված A4 (210 x 297) մմ ձևաչափի թերթերի համար:	Հատ	6	1800	10800	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
2	39241210/2	մկրատ, գրասենյակային	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 18 սմ երկարությամբ:	Հատ	50	75	3750	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
3	30192720/2	գծանշիչ	տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրով:	Հատ	160	75	12000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
4	30192710/2	սոսնձամատիտ, գրասենյակային	չոր սոսինձ՝ գրասենյակային (սոսնձամատիտ), թուղթ սոսնձելու համար	Հատ	49	95	4655	ք.•Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
5	30141200/2	հաշվասարք, գրասենյակային	12 նիշանի սեղանի 18X13.5 սմ չափերով, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	Հատ	5	2600	13000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
6	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	թղթապանակ, թելով, թղթյա A4 ֆորմատի թղթերի համար	Հատ	500	70	35000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ

7	30192100/1	ռետին հասարակ	Ռետին՝ փոքր, նախատեսված մատիտով գրածները մաքրելու համար	Հատ	50	35	1750	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
8	30192780/2	էջաբաժանիչ	5 գույների յուրաքանչյուր գույնից 25-ական պլաստիկ	Հատ	50	75	3750	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
9	30197322/2	կարիչ, 20-50 թերթի համար	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	Հատ	69	75	5175	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
10	39263520/1	սեղմակ, միջին	Մետաղական, լայնությունը 3սմ	Հատ	1000	25	25000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
11	30197231/2	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	թափանցիկ պոլիմերային թաղանթ (ֆայլ), A4 ձևաչափի թղթերի համար, արագակարներին ամրացնելու հնարավորությամբ	Հատ	322	8	2576	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
12	30192210/2	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	Հատ	10	390	3900	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
13	30197323/2	կարիչ, 50-ից ավելի թերթի համար	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր 50 –ից ավել թերթի համար	Հատ	5	1950	9750	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
14	30192154/1	կնիքի լրացուցիչ բարձիկներ	Մետաղական իրանով, 8սմx12սմ չափերով, կապույտ գույն	Հատ	5	280	1400	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
15	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	Հատ	20	80	1600	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
16	39292510/2	քանոն, պլաստիկ	Քանոն պլաստիկ 30սմ	Հատ	51	95	4845	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ

								տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	
17	39263100/1	գրասենյակային լրակազմ	Գրենական պիտույքների դասավորման հարմարանքներ և պարագաների լրակազմ՝/12-14 Հատ/	Հատ	10	3000	30000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
18	30192121/2	Գրիչ գնդիկավոր	Գնդիկավոր, թանաքի գույնը կապույտ,սև,կարմիր տարբեր տեսակի կառուցվածքով, 0,4:0.5 մմ ծայրով	Հատ	1000	39	39000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
19	30199420/2	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	թուղթ նշումների համար սոսնձվածքով, կպչուն 7*5 - 7*5 սմ	Հատ	101	180	18180	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
20	39263400/2	ամրակ, միջին	Մետաղական, լայնությունը 33սմ	Տուփ	732	120	87840	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
21	30192133/1	սրիչներ	Սրիչ սովորական, գրաֆիտե մատիտի համար	Հատ	100	59.39	5939	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
22	30197111/2	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր բլոկներով՝ հմ 10 24 մմ/6 մմ, 26 մմ/6 մմ	Տուփ	300	50	15000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ
23	39263410/1	ամրակ, փոքր	Մետաղական, լայնությունը 28սմ	Տուփ	375	80	30000	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ԿԳՄՍ նախարարություն	Մինչև 2025թ. մայիսի 20-ը ներառյալ

ԳՆՈՐԴ

---------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՌԱՌՈՂ

---------- **Ս. Եսայան**

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված N 2
«29» 04 2025թ. կնքված
ՀՀԿԳՄՆՄԱՊՁԲ-25/37 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հրա-վերով նախա-տեսված չափա-բաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասա-կարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												Ընդամենը
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	30193200/2	փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշարեր	-	-	-	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800	10800
2	39241210/2	մկրատ, գրասենյակային	-	-	-	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750
3	30192720/2	գծանշիչ	-	-	-	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000	12000
4	30192710/2	սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	4655	4655	4655	4655	4655	4655	4655	4655	4655	4655
5	30141200/2	հաշվասարք, գրասենյակային	-	-	-	13000	13000	13000	13000	13000	13000	13000	13000	13000	13000
6	30197233/1	թղթապանակ, թելով, թղթյա	-	-	-	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000	35000
7	30192100/1	ռետին հասարակ	-	-	-	1750	1750	1750	1750	1750	1750	1750	1750	1750	1750
8	30192780/2	էջաբաժանիչ	-	-	-	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750	3750
9	30197322/2	կարիչ, 20-50 թերթի համար	-	-	-	5175	5175	5175	5175	5175	5175	5175	5175	5175	5175
10	39263520/1	սեղմակ, միջին	-	-	-	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000	25000

11	30197231/2	թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	2576	2576	2576	2576	2576	2576	2576	2576	2576	2576
12	30192210/2	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	-	-	-	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900	3900
13	30197323/2	կարիչ, 50-ից ավելի թերթի համար	-	-	-	9750	9750	9750	9750	9750	9750	9750	9750	9750	9750
14	30192154/1	կնիքի լրացուցիչ բարձիկներ	-	-	-	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400	1400
15	30192220/1	պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	-	-	-	1600	1600	1600	1600	1600	1600	1600	1600	1600	1600
16	39292510/2	քանոն, պլաստիկ	-	-	-	4845	4845	4845	4845	4845	4845	4845	4845	4845	4845
17	39263100/1	գրասենյակային լրակազմ	-	-	-	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000
18	30192121/2	Գրիչ գնդիկավոր	-	-	-	39000	39000	39000	39000	39000	39000	39000	39000	39000	39000
19	30199420/2	թուղթ նշումների համար, սոսնձվածքով	-	-	-	18180	18180	18180	18180	18180	18180	18180	18180	18180	18180
20	39263400/2	ամրակ, միջին	-	-	-	87840	87840	87840	87840	87840	87840	87840	87840	87840	87840
21	30192133/1	սրիչներ	-	-	-	5939	5939	5939	5939	5939	5939	5939	5939	5939	5939
22	30197111/2	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	-	-	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000	15000
23	39263410/1	ամրակ, փոքր	-	-	-	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000	30000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ

---------- **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

---------- **Ս. Եսայան**

(ստորագրություն)

Կ.Տ